

ՀԻՄՆԱԿՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԱԳՐՈՔ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԿՈՒՄԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, «ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱՆԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԱԳՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

1.1. Ընտրական օրենսդրությունը բարեփոխելու նախաձեռնությունը Հայաստանի Հանրապետությունում սկիզբ է առել դեռևս 2018 թվականի ժողովրդավարական գործընթացների ընթացքում: 2018 թվականին ստեղծվեց ՀՀ Վարչապետին առընթեր ընտրական օրենսգրքի բարեփոխումների Հանձնաժողով, որի կողմից մշակվեց Ընտրական օրենսգրքում փոփոխությունների նախագիծ: Թեև նախագիծը Ազգային ժողովի կողմից բավարար քվե չստացավ, ինչի արդյունքում 2018թ. դեկտեմբերի արտահերթ խորհրդարանական ընտրություններն անցկացվեցին անփոփոխ ընտրական օրենսգրքով, այդուհանդերձ, որպես իրապես ազատ և արդար գնահատված՝ Ազգային ժողովի 2018 թվականի դեկտեմբերի 9-ի արտահերթ ընտրությունները նախադրյալներ ստեղծեցին ընտրական օրենսդրության մեջ նախատեսելու այնպիսի կառուցակարգեր, որոնք վերոնշյալ ընտրությամբ ամրագրված ձեռքբերումները, այն է՝ հանրության շրջանում ընտրությունների նկատմամբ վստահությունը, ընտրվող իշխանությունների լեգիտիմությունը, ինչպես նաև հասարակության ընկալումներում ընտրական գործընթացի արդարացիության նկատմամբ վստահությունը կդնեն օրենսդրական հենքի վրա: Եվ արդյունքում նմանատիպ ընտրությունները կդառնան ոչ թե բացառություն, այլ ընդհանուր կանոն:

1.2. Ընտրական օրենսգրքում փոփոխություններ իրականացնելու նախապատմությունը:

Յոթերորդ գումարման Ազգային ժողովի գործունեության մեկնարկից հետո Ազգային ժողովի նախագահ Արարատ Միրզոյանի նախաձեռնությամբ ստեղծվեց ընտրական բարեփոխումների աշխատանքային խումբ, որի կազմում են բոլոր երեք խմբակցությունների ներկայացուցիչները և համակարգվում է Համազասպ Դանիելյանի կողմից:

Աշխատանքային խմբի աշխատանքներին մաս է կազմել նաև խորհրդատվական մարմինը, որին մասնակցել են գործադիր ճյուղի գերատեսչությունները (Արդարադատության նախարարություն, Ոստիկանություն, Տարածքային կառավարման նախարարություն), Կենտրոնական ընտրական հանձնաժողովը, Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը: Ընտրական օրենսգրքի նախագծի մշակման աշխատանքներին ակտիվորեն մասնակցել են նաև համապատասխան փորձառություն ունեցող հասարակական կազմակերպություններ, միջազգային

կազմակերպություններ և փորձագետներ: Աշխատանքային խմբի աշխատանքների առաջնահերթությունները և գործողությունների պլանը քննարկվել և ամփոփվել են 2019թ. հունիսի աշխատաժողովում, որի ներկա են եղել նաև ԵՆ ՎՀ և ԵԱՀԿ ԺՀՄԻԳ-ի ներկայացուցիչները: Աշխատանքային խմբի գործունեության ընթացքում ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության հետ համատեղ մշակվել և Ազգային ժողովում 2020 թվականի հունիսին ընդունվել է Ընտրական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագիծը (տեղական ինքնակառավարման մարմինների մասով)՝ ընդդիմության համահեղինակությամբ, իսկ 2020 թվականի դեկտեմբերի 29-ին՝ նաև «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը, որը նախատեսված է եղել նախապես ընդունված գործողությունների ծրագրով:

2020 թվականի ամռանը Ընտրական օրենսգրքում փոփոխությունների նախագծի վերաբերյալ տեղի են ունեցել 5 առցանց հանրային քննարկումներ¹: Նախագծի մշակման ընթացքում դիտարկվել են Վենետիկի հաճնաժողովի 2016թ. ներկայացրած դիտարկումները, ինչպես նաև 2018թ. փոփոխությունների նախաձեռնման ընթացքում ներկայացված առաջարկություններն ու մոտեցումները:

1.3. ՀՀ 2019-2023թթ. դատական և իրավական բարեփոխումների ռազմավարություն: ՀՀ Կառավարությունը 2019 թվականի հոկտեմբերի 10-ին ընդունեց «ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2019-2023թթ. ռազմավարությունը և դրանից բխող միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» որոշումը², որով վերահաստատվեց 2018թ. նախանշված առաջնային նպատակը, այն է՝ Հայաստանում ժողովրդավարական ընտրական օրենսդրությամբ սահմանված համակարգի ինստիտուցիոնալ կայացումը, որը հնարավոր է իրականացնել ընտրողների համար հասկանալի և կանխատեսելի ընտրակարգ ներդնելու, բոլոր օղակներում ընտրական վարչարարությունը բարելավելու, քարոզարշավի ֆինանսավորման վերահսկողության արդյունավետությունն ու թափանցիկությունը բարձրացնելու, ընտրակաշառքի և ընտրողների նկատմամբ ճնշումները բացառելու համար անհրաժեշտ գործունե մեխանիզմներ ներդնելու, բազմակի քվեարկությունը բացառող երաշխիքներն ավելացնելու, քվեարկության գործընթացների մատչելիությունն ապահովելու, ընտրական գործընթացի նկատմամբ վերահսկողություն իրականացնող դերակատարների պատշաճ գործունեությունը երաշխավորելու, ընտրական վեճերի գործընթացները հստակեցնելու և դրանց արդյունավետությունը բարձրացնելու միջոցով:

Դատական և իրավական բարեփոխումների ռազմավարությամբ կառավարությունը նախանշել է բարեփոխման ուղղությունների հետևյալ հիմնական և ոչ սպառիչ ցանկը.

- թեկնածուների տարածքային ցուցակների վերացում, պարզ համամասնական ընտրակարգի ընդունում,
- կուսակցական բազմակարծության ապահովման նպատակով՝ ընտրական շեմի իջեցում,
- կրալիցիաների ձևավորման կարգի բարեփոխում,

¹ http://parliament.am/news.php?cat_id=2&NewsID=13227&year=2020&month=08&day=06&lang=arm

² <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=135487>

- ընտրական գործընթացների նկատմամբ վերահսկողության հնարավորությունների բարձրացում, այդ թվում՝ ընտրական հանձնաժողովների որոշումների, գործողությունների և անգործության բողոքարկման ընթացակարգի վերանայում,
- ընտրագրավի գումարի չափի վերանայում,
- հաշմանդամություն ունեցող անձանց համար ընտրական գործընթացի մատչելիության ապահովում,
- ընտրողների ցուցակների կազմման և վարման գործընթացի արդյունավետության բարձրացում,
- բանավեճի և լուսաբանման վերաբերյալ կարգավորումների բարեփոխում,
- դիտորդական գործունեությամբ ընտրական գործընթացների վերահսկողության բարեփոխում³:

1.4. Միջազգային կազմակերպությունների առաջարկություններ: Ընտրական բարեփոխումների անհրաժեշտությունն ամրագրվել է ընտրական հարցերով մասնագիտացած միջազգային կառույցների, մասնավորապես՝ Վենետիկի հանձնաժողովի և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ Եզրակացություններում ու հանձնարարականներում, որոնք արտացոլված են Ընտրական օրենսգրքի նախագծերի վերաբերյալ կարծիքներում⁴ և 2017, 2018թթ. ընտրությունների դիտորդական առաքելությունների ամփոփիչ զեկույցներում:⁵ Դրանք, մասնավորապես, ներառում են հետևյալը՝

- արտերկրում գտնվող անձանց փոխարեն քվեարկության վերաբերյալ կասկածների փարատման նպատակով հնարավորություն ընձեռնել արդյունավետորեն ծանոթանալու քվեարկության մասնակիցների ցուցակին՝ առանց անձի՝ քվեարկության գաղտնիության խախտման,
- վերանայել կանանց ներկայացվածության քվոտան՝ ապահովելով նրանց արդյունավետ բաշխումը ընտրական ցուցակում՝ ոչ բավարար ներկայացված սեռի թեկնածուներին համապետական ցուցակների յուրաքանչյուր երկրորդ դիրքում ընդգրկելու միջոցով,
- պարզեցնել քվեարկության և քվեարկության արդյունքների ամփոփման գործընթացը և քվեարկության արդյունքների սահմանումը,
- ապահովել բոլոր շահագրգիռ կողմերի իմաստալից մասնակցությունը օրենսգրքի փոփոխությունների գործընթացում,
- ապահովել նոր տեխնոլոգիաների արդյունավետ և աստիճանական ներդրումը, ներառյալ՝ ձեռքբերումը, փորձարկումը, համապատասխան անձանց վերապատրաստումը և հանրության իրազեկումը,
- վերանայել հետընտրական կոալիցիայում ներգրավվող քաղաքական ուժերի թվի և ձևավորման ժամկետի սահմանափակումը,

³ Հարկ է նշել, որ բարեփոխումների մի մասը հնարավոր է իրականացնել Սահմանադրության մեջ փոփոխություններ կատարելուց հետո: Ուստի այս նախագծերի փաթեթում ներառվում են միայն այն կարգավորումները, որոնք չեն պահանջում սահմանադրական փոփոխություններ:

⁴ <https://www.osce.org/odihr/elections/armenia/275511?download=true>
<https://www.osce.org/odihr/elections/armenia/239591?download=true>
[http://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-REF\(2017\)023-e](http://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-REF(2017)023-e)

⁵ <https://www.osce.org/files/f/documents/6/3/333491.pdf>,
https://www.osce.org/files/f/documents/9/b/413564_0.pdf

- վերանայել արտահերթ ընտրությունների դեպքում թեկնածուների ցուցակների գրանցման համար փաստաթղթերի ներկայացման ժամկետները,
- նախատեսել վարչական ռեսուրսի չարաշահման ընդհանուր արգելք,
- դիտորդների և ՋԼՄ ներկայացուցիչների հավատարմագրման համար նախատեսել ողջամիտ ժամկետներ,
- քվերակության արդյուքների աղյուսակավորման գործընթացի թափանցիկության մեծացման նպատակով ներառել լրացուցիչ միջոցներ,
- նպաստել հանրային լրատվամիջոցների խմբագրական անկախությանը և խթանել քաղաքացիների համար անկողմնակալ, քննադատական և վերլուծական քաղաքական տեղեկատվության և ծրագրերի հասանելիությունը՝ այդ թվում՝ այն դեպքերում, երբ լուսաբանվում է պետական պաշտոնյաների գործունեությունը,
- սահմանել քարոզարշավային բոլոր ծախսերի մասին հաշվետվության ներկայացման պահանջ՝ ներառելով կազմակերպչական, ինչպես նաև մինչև պաշտոնական քարոզարշավի մեկնարկը կատարված ծախսերը,
- առավել նախաձեռնողական լինել հաշմանդամություն ունեցող անձանց ընտրական մասնակցության համար հասանելի միջավայր ապահովելու հարցում և միջոցներ ձեռնարկել սահմանափակ տեղաշարժման հնարավորություններով անձանց համար քվեարկությունն առավել մատչելի դարձնելու համար: Հասանելիության խնդիրներ ունեցող շենքերը պետք է առանձնացվեն նախապես և անհրաժեշտ դեպքերում պետք է տրվեն այլընտրանքային լուծումներ:
- կազմակերպել ընտրողների ուսուցման արշավներ՝ խթանելու մեդիագրագիտությունը, պատասխանատվությունն ու սոցիալական ներառումը: Սադրիչ և վիրավորական խոսքը բացառելու համար ընտրապայքարի մասնակիցները կարող են մշակել և կիրառել վարքագծի կանոններ և ինքնուրույն ձևավորել լավ գործելակերպ,
- հստակ սահմանել ՎՎԾ-ի՝ ֆինանսական վերահսկման մանդատը և վերջինիս տրամադրել անհրաժեշտ միջոցներ և մարդկային ռեսուրսներ՝ ապահովելու, որ ՎՎԾ-ն իրականացնի քարոզարշավի ֆինանսավորման պատշաճ վերահսկողություն,
- դիտարկել ՀՈՀ-ի՝ քաղաքական լուսաբանման ամբողջական և անկախ մոնիթորինգ իրականացնելու կարողությունների զարգացման հնարավորությունը, այդ թվում՝ ընտրությունների միջև ընկած ժամանակահատվածում,
- դիտարկել հանրային հեռարձակողների համար նախընտրական քարոզարշավի ընթացքում բանավեճեր կազմակերպելու պարտավորության սահմանումը,
- փոփոխել ՏԸՀ-ներին ներկայացվող բողոքների ներկայացման և լուծման, ինչպես նաև ընտրությունների օրվանից հետո ՏԸՀ որոշումների բողոքարկման ժամկետները՝ արդյունավետ իրավական պաշտպանության միջոցի ապահովման համար:

1.5. Տեղական դիտորդական կազմակերպությունների գնահատականներ: Մինչև 2018թ. Երևանի ավագանու և ԱԺ արտահերթ ընտրությունները տեղական դիտորդական առաքելությունները ընտրությունների ընթացքում հիմնականում արձանագրել են զանգվածային ընտրախախտումներ: Տեղական կազմակերպությունների հիմնական մտահոգությունները հանգել են հետևյալին.

- Հայաստանի Հանրապետությունից դուրս գտնվող անձանց քվեարկության հնարավորության խտրական ապահովումը,
- ընտրողների ռեգիստրի թարմացման հետ կապված խնդիրները և առկա անձշտություններն ու բացակա անձանց քվեների հնարավոր օգտագործումը,
- հավասար ընտրական իրավունքի ապահովման և բազմակի քվեարկության բացառման մեխանիզմների անարդյունավետությունը,
- վարչական ռեսուրսի չարաշահումը և անհավասար հնարավորությունները,
- առանձին խմբերի ընտրողների՝ կարծիք ձևավորելու հնարավորության բացակայությունը՝ քարոզչական տեղեկատվության անհասանելիության պատճառով (օր.՝ զինծառայողներ, քրեակատարողական հիմնարկներում գտնվողներ),
- ընտրախախտումների կանխարգելման գործուն մեխանիզմների բացակայությունը,
- քվեարկության գաղտնիության պահպանման խնդիրները,
- դիտորդների և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների իրավունքների սահմանափակումը,
- ընտրախախտումների և քվեարկության արդյունքների արդյունավետ բողոքարկման մեխանիզմների ու հնարավորությունների բացակայությունը:

Առաջարկվող նախագծերի փաթեթում տեղ են գտել այնպիսի փոփոխություններ, որոնք առանցքային նշանակություն ունեն Հայաստանի հետագա ժողովրդավարացման, ավելի ներառական քաղաքական հաստատությունների ձևավորման և ընտրակարգի ներկայացուցչականության բարձրացման տեսակետից, սակայն դրանց մի մասի իրականացումը պահանջում է որոշակի նախապատրաստական աշխատանք, ուստի անցումային դրույթներով նախատեսվում է փոփոխությունների ուժի մեջ մտնելու տարբեր ժամանակացույց: Ընտրական օրենսգրքում փոփոխությունները ներկայացվում են հարակից մի շարք օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենսդրական փաթեթով:

2. «Ընտրական օրենսգրքը սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծ

2.1. Ընտրությունների անցկացումը ռազմական և արտակարգ դրության պայմաններում: Սահմանադրությամբ արտակարգ և ռազմական դրության պայմաններում արգելվում է Ազգային ժողովի ընտրությունների անցկացումը: Ընտրական օրենսգրքն այդ արգելքը տարածում է նաև տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների վրա: Կովիդ-19 համավարակով պայմանավորված արտակարգ դրության պայմաններում Ընտրական օրենսգրքով սահմանված կարգով 2020 թվականին հետաձգվեցին բոլոր տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները: Սակայն ակնհայտ է, որ համավարակի պայմաններում առանձին համայնքներում ընտրությունները կարող էին իրականացվել՝ հակահամաճարակային կանոնների պահպանմամբ:

2.2. Ընտրությունների հրապարակայնություն: Տեղամասային կենտրոններում տեսախցիկների տեղադրումը, ընտրողների գրանցման սարքերի ներմուծումը և հատկապես քվեարկությանը մասնակցած ընտրողների ցուցակների հրապարակումը մեծամասամբ կատարեցին իրենց դերը ընտրախախտումները կանխելու և ընտրություններն ավելի թափանցիկ դարձնելու հարցում: Այդուհանդերձ, դեռևս մնում են մտահոգություններ, որոնք, մասնավորապես, պայմանավորված են ընտրացուցակների թերություններով: Բացի այդ, վարչարարությունը միշտ հնարավոր է բարելավել ժամանակակից տեխնոլոգիական լուծումների դարաշրջանում: Անհրաժեշտ է շարունակաբար օպտիմալացնել և արդյունավետ դարձնել ընտրական գործընթացներում ներգրավված դերակատարների, այդ թվում՝ ընտրական հանձնաժողովների, ոստիկանության, թեկնածուների, ընտրողների, դիտորդական կազմակերպությունների և այլ մասնակիցների աշխատանքը և թափանցիկ դարձնել ընտրական ողջ գործընթացը: Մասնավորապես՝

- ապահովել ձայնագրման հնարավորությամբ տեսանկարահանող սարքեր՝ ապահովելով դրանց տեսանյութերի վրա տեղամասի համարը և ժամը, ինչպես նաև երաշխավորելով անվճար հասանելիությունը,
- տարածքային ընտրական հանձնաժողովների աշխատանքը դարձնել առավել թափանցիկ՝ ամրագրելով տեսախցիկներով կահավորելու պահանջ, որոնցով հնարավորություն կստեղծվի ուղիղ ժամանակային ռեժիմում հատուկ կայքի միջոցով հեռարձակել տեղամասային ընտրական հանձնաժողովներից փաստաթղթերի ստացման և արդյունքների աղուսակավորման գործընթացը,
- ներդնել դիմում-բողոքների ընդունման համակարգ, որը տարածքային ընտրական հանձնաժողովների կողմից կընդունի էլեկտրոնային ստորագրությամբ փաստաթղթեր՝ ավանդական և տարածության ու ժամանակի տեսանկյունից առավել ռիսկային փոստային ծառայության կիրառման փոխարեն:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակվում է կամայականորեն՝ դրանով սահմանափակելով ընտրություններին որպես թեկնածու մասնակցելու օբյեկտիվ հնարավորությունը: Ուստի անհրաժեշտ է, որ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը կենտրոնացված կարգով հանրային հեռուստատեսությամբ և ռադիոյով տեղեկատվություն հրապարակի նշանակված ընտրությունների, դրանց ժամանակացույցի և թեկնածույան գրանցման վերաբերյալ:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքի արդիականացում: Թե՛ համավարակով պայմանավորված, թե՛ ընդհանուր վարչարարության արդյունավետության բարձրացման տեսանկյունից առցանց գրանցման և տեղեկատվության փոխանակման հարթակներն առավել արդյունավետ են: Միաժամանակ, օգտագործվող վերահսկող գործիքների հնարավորինս ավտոմատացումը կօգնի ապահովելու օրենսդրության արդյունավետ կիրառումը՝ նվազեցնելով դրա շրջանցման հնարավորությունները, միևնույն անձի կողմից անհամատեղելի գործառույթների ստանձնումը, չհավատարմագրված անձանց ներկայությունը, թեկնածուների գրանցումը, տեսանելիությունն ու հաշվետվողականությունը:

Ուստի ընտրական գործընթացի մասնակիցների գրանցման, տեսանելիության ապահովման և տվյալների արդյունավետ կառավարման համար անհրաժեշտ է արդիականացնել Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքը:

2.3. Ընտրողների ցուցակներ:

Ընտրողների ցուցակների հետ կապված հիմնական խնդիրները վերաբերում են դրանցում տեղ գտած անճշտություններին, Հայաստանից դուրս գտնվող անձանց անունների ներառման հիմքով դրանց հնարավոր օգտագործման հետ կապված ռիսկերին:

Վերջին տարիների համապետական ընտրություններին բազմիցս մտահոգություններ են արտահայտվել ընտրողների ուճացված ցուցակների և բացակա ընտրողների փոխարեն քվեարկության հնարավոր ռիսկերի կապակցությամբ: Այսպիսի կասկածների փարատմանն ուղղված կարևոր լուծում է եղել քվեարկությանը մասնակցած ընտրողների ստորագրված ցուցակների հրապարակումը, ինչը 2016թ. Ընտրական օրենսգրքի նորամուծությունների շարքում եզակի լուծումներից էր, որն ընդունվեց քաղաքական և քաղաքացիական լայն կոնսենսուսի արդյունքում: Սակայն անձնական տվյալների գաղտնիության տեսանկյունից այս կարգավորման վիճելիությունը փարատելու նպատակով նախատեսվում է Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ ստորագրած ցուցակների հասանելիության ապահովում միայն մինչև քվեարկության արդյունքների ամփոփման համար՝ Ընտրական օրենսգրքով սահմանված ժամկետի ավարտը, իսկ ընտրական հանձնաժողովի որոշումը դատական կարգով վիճարկելու դեպքում՝ մինչև դատական ակտի ուժի մեջ մտնելը:

Չնայած ընտրողների ստորագրված ցուցակների հրապարակմանը, շարունակում է խնդրահարույց մնալ Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, սակայն Հանրապետությունից դուրս բնակվող անձանց անունների շարունակական առկայությունը ընտրացուցակներում, որոնց թիվն, ըստ ՀՀ ոստիկանության 2018թ. տվյալների, հասնում էր մոտ 200.000-ի: Մի կողմից, այն պարունակում է ռիսկ՝ նրանց քվեների հնարավոր ապօրինի օգտագործման առումով, մյուս կողմից հիմք է տալիս անհարկի վարչարարության (օրինակ՝ ծանուցման) համար, այդ թվում՝ հանգեցնելով ավելորդ ծախսերի:

2.4. Նախընտրական քարոզարշավ: Նախընտրական քարոզարշավի կարգավորումները պետք է նպատակաուղղված լինեն ընտրապայքարին մասնակցող բոլոր քաղաքական միավորների՝ թեկնածուների, կուսակցությունների, դաշինքների համար հավասար հնարավորությունների ստեղծմանը, վարչական ռեսուրսի չարաշահման բացառմանը, հանրության առջև թափանցիկ և հաշվետու գործունեությանը, գաղափարների մրցակցությանը, ընտրողների՝ իրազեկ ընտրություն կատարելու և ազատ կամարտահայտման պայմանների ապահովմանը:

Նախընտրական քարոզչությանն առնչվող սահմանումներ: Նախընտրական քարոզչությանն առնչվող որոշ եզրույթներ ՀՀ օրենսդրությամբ հստակ չեն սահմանվում կամ թերի են սահմանված, ինչը խնդիրներ է հարուցում օրենքի միատեսակ մեկնաբանման ու արդյունավետ կիրառման առումով: Այսպիսով, Ընտրական օրենսգիրքը չի սահմանում «**նախընտրական քարոզչություն**» հասկացությունը, որը զուտ «քարոզչություն» բառի ընկալման տեսանկյունից հաճախ տարընթերցման առիթ ու հնարավորություն է տալիս: «Քարոզչություն» հասկացությունն ու դրա ընկալումն ինքնին սահմանափակ է և չի ներառում ընտրապայքար ծավալելուն ուղղված

նախապատրաստական միջոցառումները (օրինակ՝ շտաբների տարածքների վարձակալումը և գործունեությունը, շտաբներում ներգրավված կամավորների աշխատանքը, սոցիոլոգիական հարցումները, նախնական վերլուծությունները և այլն), ինչի արդյունքում որոշ նշանակալից և ծախսատար գործողություններ կարող են դուրս մնալ ուշադրությունից, չհաշվառվել, չգնահատվել որպես արգելված գործունեության տեսակներ՝ առանձին խումբ անձանց համար և չարտացոլվել ընտրություններին մասնակցող քաղաքական միավորների ֆինանսական հաշվետվություններում: Միաժամանակ՝ հարկ է նկատել, որ «նախընտրական քարոզչության ժամանակահատվածը» բավականին կարճ է և հնարավորություն չի տալիս ընտրողներին պատշաճ ծանոթանալու մրցակիցների, հատկապես՝ ավելի քիչ հայտնի մրցակիցների քաղաքական ծրագրերին և կատարելու իրազեկ ընտրություն:

ԶԼՄ-ներով գովազդի և քարոզչության կանոններ:

Գործող ընտրական օրենսգրքով կարգավորվող քարոզչության մեդիա խողովակները սահմանափակված են ավանդական մեդիայի տեսակներով, ինչպես օրինակ՝ տպագիր մամուլ, ռադիո, հեռուստատեսություն: Այսինքն՝ կարգավորումից դուրս են մնում էլեկտրոնային լրատվամիջոցները, համացանցով, այդ թվում՝ սոցիալական մեդիայով, գովազդը և կաբելային կապը, որոնք զգալի դերակատարում ունեն ներկայիս նախընտրական քարոզչության գործընթացներում: Մի կողմից, այս խողովակներին չեն ներկայացվում պահանջներ՝ ապահովելու հավասար մրցակցային պայմաններ տարբեր քաղաքական ուժերի ու թեկնածուների համար, մյուս կողմից, դրանց մի մասին առնչվող ծախսերը չեն ներառվում նախընտրական հիմնադրամների ծախսերում ու չեն հրապարակվում հայտարարագրերում:

Իր հերթին, վճարովի եթերաժամի գնի բարձր լինելը լրացուցիչ հնարավորություններ է ընձեռում առավել խոշոր միջոցների տիրապետող կուսակցությունների համար, ինչը վտանգում է մրցակցային միջավայրը: Ընդ որում, գանգվածային լրատվամիջոցներում քաղաքական գովազդի գնային սահմանափակումների բացակայությունը (բացառությամբ վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների) և ԶԼՄ-ների շահույթ հետապնդելու մտադրությունը կարող են նաև արհեստականորեն բարձրացնել գները նախընտրական ժամանակահատվածում:

Նախընտրական քարոզարշավի ընթացքում հաճախ հրապարակվում են թեկնածուների, ընտրություններին մասնակցող կուսակցությունների վարկանիշների վերաբերյալ սոցիոլոգիական հարցման արդյունքներ: Դրանց վերաբերյալ տեղեկությունները չեն տալիս ամբողջական տվյալներ իրականացնող կազմակերպությունների և մեթոդաբանության որոշ մանրամասների մասին: Ի լրումն, դրանք արտատպվում են մամուլում: Բացի այդ, Ընտրական օրենսգրքում արգելում է քվեարկության նախորդ օրը, ինչպես նաև քվեարկության օրվա նախօրեին սոցիոլոգիական հարցումների տվյալների հրապարակումը վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող հեռուստատեսությամբ, ռադիոյով կամ տպագիր մամուլով, մինչդեռ դրանք կարող են անարգել տարածվել այլ ԶԼՄ-ների և համացանցի միջոցով: Լրագրողական հարցումների արդյունքների հրապարակման նկատմամբ ևս առկա է որոշակի պահանջների սահմանման անհրաժեշտություն՝ հանրային պատշաճ ընկալման և գնահատման տեսանկյունից:

Ընտրական օրենսգրքը սահմանում է, որ եթե իրականացվում է ընտրություններին մասնակցող կուսակցությունների ընտրական ցուցակում ընդգրկված՝ հանրային ծառայության մեջ

գտնվող թեկնածուի այլ գործունեության լուսաբանում, ապա վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող զանգվածային լրատվության միջոցն այն հաշվի է առնում մյուս թեկնածուների, ընտրություններին մասնակցող կուսակցությունների գործունեությունը լուսաբանելիս: Ինչպես տեսնում ենք, այս պահանջը չի տարածվում այլ զանգվածային լրատվամիջոցների վրա՝ դրանով իսկ խոցելի դարձնելով կարգավորման արդյունավետությունը ժամանակակից պայմաններում:

Ընտրակաշառքի կանխարգելում: Երրորդ անձինք: Գործող Ընտրական օրենսգրքի համաձայն՝ նախընտրական քարոզչության ժամանակահատվածում, ինչպես նաև քվեարկության նախորդ և քվեարկության օրը թեկնածուներին, ընտրություններին մասնակցող կուսակցություններին արգելվում է անձամբ կամ նրանց անունից կամ որևէ այլ եղանակով ընտրողներին անհատույց կամ արտոնյալ պայմաններով տալ (խոստանալ) դրամ, սննդամթերք, արժեթղթեր, ապրանքներ կամ մատուցել (խոստանալ) ծառայություններ: ՀՀ քրեական օրենսգրքով այս գործողությունների արգելքը սահմանվում է ընտրությունների նշանակման որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև ընտրությունների արդյունքների ամփոփումը :

Հայաստանում առավել տարածված է, երբ քաղաքական գործիչները կամ նրանց մերձավորներն են ներգրավված ասոցացվող կազմակերպություններում, ինչը նախընտրական ժամանակահատվածում անխուսափելիորեն կարող է ձևավորել ընկալումներ, որ բարեգործությունն արվում է առնչվող թեկնածուների, կուսակցությունների կամ դաշինքների քարոզչության շրջանակում:

ՀՀ քրեական օրենսգրքը նախատեսում է պատժամիջոցներ ինչպես նաև ընտրակաշառք տալու, այնպես էլ՝ ստանալու համար: Միաժամանակ, դժվար բացահայտելի հանցագործության բացահայտումը խթանելու համար օրենսգրքով սահմանված է խրախուսող մեխանիզմ, որով կաշառք ստացող անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե այդ անձը մինչև իրավապահ մարմիններին կատարված հանցանքի մասին հայտնի դառնալը, բայց ոչ ուշ, քան եռօրյա ժամկետում կաշառք ստանալու մասին կամավոր հայտնում է իրավապահ մարմիններին և աջակցում է հանցագործությունը բացահայտելուն: Գործնականում, սակայն, տվյալ իրավակարգավորումն առանձնապես չի զսպել ո՛չ ընտրակաշառք տվողներին և ո՛չ էլ վերցնողներին: Չնայած դա կարելի է բացատրել մինչև հեղափոխական իշխանությունների կողմից արդար ընտրություններ անցկացնելու իրական քաղաքական կամքի բացակայամբ և համատարած անպատժելիությամբ, այդուհանդերձ, հարկ է արձանագրել, որ եղած իրավակարգավորումները թերի են, իսկ նախատեսված պատասխանատվության միջոցները՝ շատ մեղմ, ուստիև չեն կարող ծառայել որպես արդյունավետ զսպող մեխանիզմ:

Ընտրողների կամքի վրա ընտրակաշառքի միջոցով ազդելու հնարավորությունը կանխելու կամ բացառելու նպատակով անհրաժեշտ է վերանայել իրավական հետևանքներ առաջացնող իրավակարգավորումները:

Քարոզչությունը քվեարկության օրը և դրա նախօրեին: Ընտրական օրենսգրքին արգելվում է քվեարկության և դրան նախորդող օրն, այսպես կոչված, «լռության» օրը, քարոզչությունը հրապարակային ելույթների, հրապարակային միջոցառումների, ինչպես նաև տպագիր մամուլի, վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող ռադիոընկերությունների և հեռուստաընկերությունների (այդ թվում՝ արբանյակային հեռարձակման ժամանակ) միջոցով: Արգելվում է վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող հեռուստատեսությամբ,

ռադիոյով կամ տպագիր մամուլով թեկնածուների, ընտրություններին մասնակցող կուսակցությունների վերաբերյալ սոցիոլոգիական հարցման արդյունքները, ինչպես նաև դրանց վերաբերյալ տեղեկատվություն հրապարակելը:

Այդուհանդերձ, տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանը զուգահեռ այս սահմանափակումը գրեթե կորցրել է իր արդյունավետությունը, քանի որ քվեարկության նախորդ օրը, ինչպես նաև բուն քվեարկության օրը լայնածավալ քարոզչություն և հակաքարոզչություն է իրականացվում համացանցում, էլեկտրոնային լրատվամիջոցներում, սոցիալական ցանցերում գովազդի անսահմանափակ կիրառման միջոցով, ինչն առաջացնում է ավելորդ լարվածություն առանց այն էլ շիկացած նախընտրական իրավիճակում: Հետևաբար՝ նախընտրական քարոզչության սահմանափակումները քվեարկության և դրան նախորդող օրը անհրաժեշտ է կիրառել բոլոր զանգվածային լրատվամիջոցների, ինչպես նաև համացանցում գովազդի նկատմամբ:

Ընտրական օրենսգիրքն արգելում է քվեարկության օրը տեղամասային կենտրոնին հարող տարածքում մինչև 50 մետր շառավղով խմբերով հավաքվելը, տեղամասային կենտրոնի մուտքին հարող տարածքում մեքենաների կուտակումը: Այնուամենայնիվ, ՀՀ-ում անցկացված ընտրությունների դիտարկումը ցույց է տալիս, որ հաճախ տեղամասային կենտրոնին հարող տարածքում կարող է ամբողջ քվեարկության օրվա ընթացքում ներկա գտնվել մեկ-երկու կողմնակի անձ և այս կամ այն ձևով որոշակիորեն ներգրավված լինել ընտրողների կամքի ազատ արտահայտման վրա ներգործության իրականացման գործընթացում՝ ենթադրաբար շարունակելով նախընտրական ժամանակահատվածում ձեռնարկած՝ ուղղորդման կամ վերահսկողության գործողությունները:

Վարչական ռեսուրսի չարաշահման արգելք: Վարչական ռեսուրսը մարդկային, ֆինանսական, նյութական (այդ թվում՝ գրասենյակ, սարքավորումներ, տրանսպորտային միջոցներ) և ոչ նյութական (այդ թվում՝ որոշումների ընդունման և վերահսկողական լծակներ, պաշտոնի ազդեցություն) այն միջոցներն են, որոնց տիրապետում է հանրային պաշտոն զբաղեցնող անձն իր պաշտոնական դիրքի բերումով, և որոնք կարող են օգտագործվել ի շահ որևէ քաղաքական ուժի կամ թեկնածուի: «Վարչական ռեսուրս» հասկացությունը հստակ չի սահմանվում Ընտրական օրենսգրքով, ինչի արդյունքում լիարժեքորեն չեն ընկալվում, ուստի և չեն կարող կիրառվել դրա չարաշահմանն առնչվող արգելքներն ու պատասխանատվությունը:

Քարոզարշավին նախորդող ժամանակահատվածում վարչական ռեսուրսի օգտագործման սահմանափակված չլինելը կարող է ստեղծել անհավասար մեկնարկային պայմաններ՝ հիմնականում ի օգուտ իշխանական լիազորություններ ունեցող քաղաքական ուժերի համար և ազդել ընտրողների կամարտահայտման վրա: Օրինակ՝ պետական և, հատկապես, համայնքային բյուջեները տնօրինող պաշտոնատար անձինք կարող են նախընտրական ժամանակահատվածում նպաստառուներին հատկացնել լրացուցիչ աջակցություն, պլանավորել և իրականացնել լրացուցիչ՝ չնախատեսված ասֆալտապատում, կազմակերպել մշակութային կամ սպորտային հանրային միջոցառումներ, ուսումնական հաստատությունների մանկավարժական կազմին, ինչպես նաև աշակերտներին/ուսանողներին ներգրավել քարոզարշավի կազմակերպական աշխատանքներին և այլն՝ ուղղակիորեն կամ անուղղակիորեն ակնարկելով քվեարկելի համապատասխան կուսակցությունների/դաշինքների/թեկնածուների օգտին:

Թեև սահմանված է, որ քարոզչություն իրականացնելու իրավունք ունեցող անձինք չեն կարող իրականացնել քարոզչություն ծառայողական պարտականությունները կատարելիս, ենթադրաբար՝ նաև աշխատանքային ժամերին, տվյալ սահմանափակումը հաճախ չի գործում և վերահսկելի չէ: Դրա առավել տարածված դրսևորումներից է քարոզչության համատեղումը նախընտրական ժամանակահատվածում կազմակերպվող գործուղումների հետ, երբ առնվազն օգտագործվում են աշխատակազմի մարդկային ռեսուրսները և պաշտոնյային կցված տրանսպորտային միջոցները:

Ինչպես հայտնի է, թե՛ տեղական, թե՛ միջազգային դիտորդական առաքելություններն արձանագրել են, որ Հայաստանում մինչև 2018թ. հեղափոխությունը տեղի ունեցած ընտրություններում էական ազդեցություն են ունեցել վարչական ռեսուրսի համատարած չարաշահումները և ընտրակաշառքը: Դրանք աստիճանաբար փոխարինել էին երբեմնի առավել ակնհայտ և կոպիտ խախտումներին, ինչպիսիք էին քվեարկության օրվա լցոնումները և արձանագրությունների կեղծումները, և, ի վերջո, վերածվել համակարգված ու լայնածավալ գործունեության, որում ներգրավվում էին բազմաթիվ պետական և համայնքային ծառայողներ, որոնք նախընտրական ողջ ժամանակահատվածում աշխատում էին իշխող քաղաքական ուժի օգտին քվեներ ապահովելու ուղղությամբ:

Ընտրությունների ընթացքում մրցակցող քաղաքական ուժերը պետք է ունենան հնարավորինս հավասար մեկնարկային հնարավորություններ և ռեսուրսներ, ինչի համար անհրաժեշտ է բացառել վարչական ռեսուրսի չարաշահման որևէ հնարավորություն: Պետական ապարատը չպետք է դարձվի և ընկալվի որպես իշխանության վերարտադրման բնական գործիք և ռեսուրս, իսկ իշխող կուսակցությունը չպետք է նույնացվի պետության հետ: Պետական ու համայնքային պաշտոնյաններն ու ծառայողները չպետք է լռելյայն դիտարկվեն որպես իշխող ուժի քարոզիչ՝ ուռճացնելով իշխող ուժի կողմից քարոզարշավում ներգրավված քարոզչական թիմը: Պետք է երաշխավորվեն հանրային ծառայության մեջ գտնվող անձանց նախընտրական քարոզարշավում ներգրավման կամավոր հիմքերը և ազատությունը՝ աջակցելու ցանկացած նախընտրած քաղաքական ուժի քարոզարշավին: Իշխանության ղեկին գտնվող քաղաքական ուժերի համար ընտրական գործընթացը չպետք է գերիշխող դառնա երկրի կամ համայնքի կառավարման նկատմամբ և, փաստացի, կաթվածահար անի պետության կառավարումը կամ տեղական ինքնակառավարումը: Վարչական ռեսուրսի սահմանափակումը պետք է լինի ոչ միայն ուղղակի ընտրախախտումների կանխարգելման, այլև, փաստացի նոր ընտրական և քարոզչական մշակույթի ձևավորման գործիք:

2.5. Ընտրությունների ֆինանսավորում: Ընտրությունների ֆինանսավորման կարգավորումները պետք է նպատակաուղղված լինեն «մաքուր» ընտրությունների կազմակերպմանը, ընտրապայքարին մասնակցող բոլոր քաղաքական միավորների գործունեության, թափանցիկության ու հաշվետվողականության, հավասար հնարավորությունների ապահովմանը, կուսակցությունների կայունության խթանմանը:

Նախընտրական ծախսերի թափանցիկություն: Նախընտրական քարոզչություն իրականացնելու նպատակով թեկնածուները, կուսակցությունները, դաշինքները բացում են նախընտրական հիմնադրամ՝ Ընտրական օրենսգրքով սահմանված դեպքերում և կարգով, սակայն Ընտրական օրենսգրքը միայն մի խումբ ծախսատեսակների համար է ամրագրում

պարտադիր պահանջ, որ դրանք կատարվեն նախընտրական հիմնադրամի միջոցների հաշվին: Այսպես, միայն նախընտրական հիմնադրամի հաշվին պետք է կատարվեն զանգվածային լրատվության միջոցներով նախընտրական քարոզարշավի, նախընտրական ժողովներ և ընտրողների հետ հանդիպումներ կազմակերպելու նպատակով դահլիճների, տարածքների վարձակալման (բացառությամբ ընտրական շտաբների), քարոզչական պաստառների, քարոզչական տպագիր և այլ նյութերի պատրաստման (տեղադրման), ձեռքբերման, ընտրողներին տրամադրվող քարոզչական բոլոր տեսակի նյութերի (ներառյալ՝ տպագիր նյութերի) պատրաստման ֆինանսավորման համար իրականացվող ծախսերը: Մինչդեռ քարոզարշավին ուղղակիորեն կամ անուղղակիորեն առնչվող մի շարք ծախսեր (օրինակ՝ տրանսպորտային միջոցների վարձակալում, ընտրական շտաբների տարածքների վարձակալում, շտաբների աշխատողների վարձատրություն, համերգների, մարզանշակության միջոցառումներում ներգրավված անձանց վարձատրություն, համացանցով գովազդ և այլն) չեն ներառվում նախընտրական հիմնադրամում և չեն դառնում հրապարակման ենթակա՝ փաստացի պետության ու հանրության վերահսկողությունից դուրս թողնելով ծախսերի զգալի գումարներ: Այս բացը գործնականում պարարտ հող է ստեղծում ֆինանսների «մրցավազքի» համար և ընտրություններին մասնակցող կուսակցությունների/դաշինքների և թեկնածուների համար ձևավորում անհավասար պայմաններ, որտեղ գերակշռում է փողի ազդեցությունը:

Հարկ է նշել, որ նախընտրական հիմնադրամով կատարվող ծախսերի ընդլայնման և դրանց հրապարակայնության վերաբերյալ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ն ևս ներկայացրել է հանձնարարականներ իր՝ համապետական ընտրությունների⁶ և սահմանադրական հանրաքվեի հետ կապված զեկույցներում⁷ առաջարկելով փոխել քարոզարշավի ֆինանսավորման կանոնակարգերը, տրամադրել մանրամասն ֆինանսական հաշվետվություններ, նախընտրական հիմնադրամի ԿԸՀ-ի աուդիտի արդյունքները տեղադրել ԿԸՀ-ի կայքում:

Կուսակցությունների/դաշինքների ծախսերի հայտարարագրերում ներկայումս նախատեսվում է նշել նախընտրական հիմնադրամ կատարված մուծումների ժամանակագրությունը և մուծված գումարի չափը, մինչդեռ կարևոր նշանակություն ունեն մուծող անձանց տվյալները՝ առավել ևս այն դեպքերում, երբ նրանց կողմից մուծումները գերազանցում են որոշակի ողջամիտ շեմը: Գործնականում նախկինում բացահայտվել են դեպքեր, երբ քաղաքացիներին գումարներ են բաժանվել առանձին կուսակցությունների նախընտրական հաշիվներին մուտքագրելու նպատակով, ինչպես նաև եղել են բացահայտումներ, երբ զգալի մեծությամբ գումարներ մուտքագրող անձինք ունեցել են ոչ համարժեք եկամուտներ:

Համաձայն Ընտրական օրենսգրքի՝ ընտրությունների արդյունքների ամփոփումից հետո նախընտրական հիմնադրամում մնացած միջոցներն ընտրության արդյունքների պաշտոնական հրապարակումից հետո եռամսյա ժամկետում, թեկնածուի, ընտրություններին մասնակցող կուսակցության հայեցողությամբ օգտագործվում են բարեգործական նպատակներով, իսկ եռամսյա ժամկետը լրանալուց հետո՝ փոխանցվում են պետական բյուջե: Նման պահանջ ներկայացվում է նաև նոր հերթական կամ նոր ընտրություններին չմասնակցող թեկնածուների,

⁶ <https://www.osce.org/hy/odihr/elections/91962?download=true>

⁷ <https://www.osce.org/hy/odihr/elections/220951?download=true>

ընտրություններին մասնակցող կուսակցությունների նախընտրական հիմնադրամներում մնացած միջոցների պարագայում: Այսպիսի պահանջը բավականին խնդրահարույց է, քանի որ, մի կողմից, այն աղճատում է կուսակցությունների դերն ու նշանակությունը հանրային կյանքում և ընկալումներում՝ նրանց վերագրելով բարեգործական գործառույթներ, մյուս կողմից անհիմն կերպով զրկում է կուսակցություններին/դաշինքներին/թեկնածուներին իրենց կողմից օրինական կերպով ներգրավված ռեսուրսները ծախսելու հնարավորությունից՝ հետագայում ստեղծելով ֆինանսական խնդիրներ, ինչը ռիսկի տակ է դնում կուսակցությունների ֆինանսական կայունությունը:

Կուսակցությունների/դաշինքների հիմնադրամների նկատմամբ պատշաճ պետական և հանրային վերահսկողություն իրականացնելու և առհասարակ գործընթացների օրինականությունն ապահովելու տեսանկյունից լրջագույն խնդիր է նաև կանխիկ գումարների շրջանառությունը:

2. 6. Դիտորդներ և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներ:

Ընտրական գործընթացի համակարգային կեղծման ու խեղաթյուրման պայմաններում դիտորդական առաքելությունները հանրային ընկալման մեջ ամրապնդվել են որպես ընտրական գործընթացների օրինականության ապահովման երաշխավորներ և ոչ թե պարզապես արձանագրողներ: Ընտրությունների վերաբերյալ տեղական դիտորդական առաքելությունների գնահատականը դարձել է նաև կարևոր ուղեմիջ միջազգային գնահատականների համար, ինչի վկայությունն են միջազգային կառույցների զեկույցներում տեղական դիտորդական առաքելությունների դիտարկումների և մտահոգությունների մեջբերումները: Ընտրական օրենսգրքի փոփոխություններով ձևակերպվում է դիտորդության նպատակը, այն է՝ ապահովել ընտրական գործընթացների նկատմամբ հանրային վերահսկողությունը:

2016թ. Ընտրական օրենսգրքով ակնհայտորեն թուլացվել են դիտորդի իրավունքներն ու երաշխիքները և իրավական պաշտպանվածության հիմքերը: Դիտորդների հավատարմագրման վերջնաժամկետ է սահմանվել քվեարկությունից առաջ 15-րդ օրը՝ նախկին 10 օրվա փոխարեն: Այս սահմանափակումն առաջացնում է խոչընդոտներ, քանի որ դիտորդական առաքելություններում հաճախ հենց վերջին պահին տեղի են ունենում փոփոխություններ: Մյուս կողմից, չեն բարելավվել նաև ԿԸՀ-ում դիտորդական կազմակերպությունների գրանցման գործընթացները, և դիտորդները ԿԸՀ վկայականները ստանում են չլրացված վիճակում: 2017թ. Ազգային ժողովի և Երևանի ավագանու ընտրությունների ընթացքում բացահայտվել են բազմաթիվ դեպքեր, երբ տեղամասում գտնվող դիտորդական վկայական ունեցող անձի անունը չի եղել տվյալ կազմակերպության կողմից հավատարմագրման ներկայացված անձանց ցանկում: Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը հնարավորություն է տալիս այս գործընթացն առավել ավտոմատացնել և արագացնել՝ նվազագույնի հասցնելով հավատարմագրման գործընթացի համար պահանջվող ռեսուրսները:

Վերջին տարիների մի շարք համապետական և տեղական ընտրական ընտրություններ բացահայտեցին, որ դիտորդական առաքելությունները հաճախ չարաշահվում են, երբ ձևավորվում են «կեղծ» դիտորդական առաքելություններ, որոնք կարող են հետապնդել տարբեր նպատակներ, ինչպես օրինակ՝ որևէ քաղաքական կողմի շահերին սպասարկող հայտարարությունների տարածումը կամ ընտրողներին ուղղորդումը, որոնք նկատվել են 2017թ. ապրիլի խորհրդարանական ընտրություններում: Կեղծ և ձևական դիտորդությունը

կանխարգելելու նպատակով անհրաժեշտ է որոշակի պարտավորություններ սահմանել դիտորդական առաքելությունների համար, որոնք, սակայն, չեն լինի առաքելությունը սահմանափակող, այլ ավելի շատ ուղղված կլինեն առաքելության ինքնակարգավորվող որակի հաստատմանը: Այսպիսի գործիք կարող է լինել որոշակի ժամկետներում դիտորդության արդյունքները զեկույցների տեսքով ներկայացնելու դեպքում դրանց պարտադիր հրապարակումը ԿԸՀ կայքում: Միաժամանակ հարկ է ներդնել որոշ օրենսդրական սահմանափակումներ, օրինակ՝ սահմանելով, որ տվյալ ընտրություններին դիտորդական առաքելություն չեն կարող իրականացնել այն կազմակերպությունները, որոնց ղեկավար մարմինների կազմում կան ընտրություններին մասնակցող կուսակցության անդամներ կամ թեկնածուներ:

Անհրաժեշտ է ընդլայնել դիտորդական առաքելությունների իրավասությունները՝ սահմանելով, որ հավատարմագրված կազմակերպություններն, ըստ էության, հանդիսանում են հանրային շահի ներկայացուցիչները ընտրական գործընթացում և պետք է իրավունք ունենան վերադասության կարգով բողոքարկելու հանձնաժողովների որոշումները, իսկ ընտրությունների հետ անմիջականորեն կապված զանցանքների հողվածներով վարչական իրավախախտումների դեպքում առանց իրավասու ընտրական հանձնաժողովին դիմելու միանգամից դիմել վարչական դատարան՝ զանցանք գործած անձանց վարչական պատասխանատվության կանչելու պահանջի մասին հայցադիմումով:

Մինչև 2016թ. Ընտրական օրենսգրքի ընդունումը երբևէ նախատեսված չի եղել ԶԼՄ-ների հավատարմագրում՝ ընտրությունները լուսաբանելու համար: 2016 թվականին առաջին անգամ ոչ միայն սահմանվեց ԶԼՄ-ի հավատարմագրումը, այլև ներմուծվեցին հավատարմագրման համար անհրաժեշտ որոշ արգելապատնեշներ և սահմանափակումներ, այն է՝ լրատվական գործունեություն իրականացնողը կարող է հավատարմագրել իր ներկայացուցչին, եթե առնվազն մեկ տարի իր անունից տարածում է լրատվության միջոց: Սակայն մեկ տարվա սահմանափակումը կիրառելի չէ, եթե լրատվական գործունեություն իրականացնողը լրատվության միջոց է տարածում վերգետնյա եթերային հեռարձակմամբ, ինչը չի հիմնավորված խտրական մոտեցում է զանգվածային լրատվության մյուս միջոցների նկատմամբ, և պետք է վերացվի:

2. 7. Ընտրական հանձնաժողովներ:

Մինչև 2016 թվականը Ընտրական օրենսգրքով սահմանված ընտրատարածքային ընտրական հանձնաժողովները համապատասխանում էին մեծամասնական ընտրակարգով սահմանված ընտրական տարածքներին: 2016 թվականին ձևավորվեցին 13 ընտրական տարածքներ, որոնք վարչարարական նշանակություն չունեին, իսկ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովները վերանվանվեցին տարածքային ընտրական հանձնաժողովներ:

Տասնամյակներ շարունակ ընտրական հանձնաժողովների ձևավորման սկզբունքը եղել է ընտրական կարգավորումների շուրջ քաղաքական և հասարակական քննարկումների առանցքային թեմաներից: Ունիվերսալ լուծման բացակայության պայմաններում ընտրվել է խառը համակարգ, որտեղ կենտրոնական և տարածքային (ընտրատարածքային) մակարդակներում ընտրական հանձնաժողովները ձևավորվում են պրոֆեսիոնալ սկզբունքով, իսկ ստորին տեղամասային մակարդակում՝ կուսակցական նշանակումներով: ՏԸՀ ձևավորման այդ եղանակի ընտրությունն առաջին հերթին պայմանավորված էր ընտրական գործընթացների նկատմամբ հանրային ցածր վստահությամբ:

Ընտրական հանձնաժողովների նկատմամբ հանրային վստահությունը բարձրացնելու նպատակով Նախագծով սահմանվում են մի շարք կարգավորումներ:

2.8. Ազգային ժողովի ընտրակարգ: Ընտրությունների կանոնների ազդեցությունը մարդկանց վարքի և ինստիտուտների վրա դրսևորվում է երկարաժամկետ հատվածում: Սա հատկապես ճիշտ է ընտրակարգի հետ կապված փոփոխություններում, երբ մի քանի ընտրական շրջափուլից հետո նոր ակնհայտ է դառնում ֆորմալ խաղի կանոնների ազդեցությունը: Հետևաբար՝ նաև հնարավորություն է ստեղծվում գնահատելու տվյալ ընտրակարգի ազդեցությունը քաղաքական և կուսակցական համակարգերի, ընտրողների վարքի, առանձին խմբերի մասնակցության և ներկայացվածության և բազմաթիվ այլ գործոնների վրա:

Սակայն Ազգային ժողովի ներկայիս ընտրակարգի հետ կապված Ընտրական օրենսգրքի կարգավորումները կարելի է բացառիկ համարել՝ բացասական առումով, քանի որ խիստ կարճ ժամանակամիջոցում արդեն իսկ ապացուցել են իրենց անարդյունավետությունը: Աժ գործող ընտրակարգի հետ կապված առկա են մի շարք խնդրահարույց կետեր, որոնց որոշակի մասը արդյունք է սահմանադրական պահանջների կամ դրան որոշակի մեկնաբանության:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 2015 թվականի մի շարք փոփոխություններ համակարգային բնույթ ունեին: Մի կողմից, իրականացվեց խորհրդարանական կառավարման ձևի անցումը և խորհրդարանի ձևավորման համամասնական սկզբունքն ամրագրվեց սահմանադրորեն: Մյուս կողմից, Սահմանադրության նույն հոդվածով նախատեսվեց կայուն խորհրդարանական մեծամասնության ապահովման դրույթը, իսկ հետագայում արդեն ընտրական օրենսգրքով ընդունվեցին կարգավորումներ, որոնք իրենց տրամաբանությամբ հակասության մեջ էին մտնում թե հռչակված նպատակների, թե հենց սահմանադրական ձևակերպումների հետ:

Համամասնական ընտրակարգի ներդրման նպատակը կուսակցությունների և կուսակցական համակարգի կայացումն էր և ընտրությունների վերացարկումն առանձին անձանցից: Սակայն Ընտրական օրենսգրքով ընտրական տարածքների և տարածքային ցուցակների ու դրանց մեջ նախապատվության քվեի (որն ավելի հայտնի դարձավ որպես «ռեյտինգային» համակարգ) հնարավորությունը ընտրակարգը փաստացի վերածեց ավելի բարդ մեծամասնական ընտրակարգի: Նոր քվեակարգը նպաստում էր, որ անհատ թեկնածուի նկատմամբ նախապատվությունը պարտադիր կերպով արտացոլվի նաև այդ թեկնածուի կուսակցության օգտին՝ զրկելով նախկինում առկա հնարավորությունից իրարից անկախ ընտրելու թեկնածու տվյալ ընտրատարածքից և կուսակցություն՝ համապետական մակարդակում: Քանի որ քաղաքացիների հիմնական նախապատվությունը հաճախ պայմանավորված է ոչ թե կուսակցության ծրագրի (օրինակ՝ կրթական քաղաքականության առաջնահերթություններ), այլ մասնավոր թեկնածուի խոստումների (օրինակ՝ կոնկրետ դպրոցի վերանորոգում) կամ նրա ունեցած մարդկային կապիտալի ու անձնական ռեսուրսների հետ, ապա այս տեսակի քվեն էլ ավելի բացասական է ազդում ծրագրային կուսակցությունների կայացման և ամրապնդման վրա, քան նախորդ՝ խառը քվեի տեսակը և նպաստում է տեղական մակարդակի ոչ քաղաքական ազդեցություն ունեցող գործիչների ներկայացվածությանը՝ ի հաշիվ քաղաքական օրակարգ ունեցող, սակայն լոկալ ազդեցություն չունեցող խմբերի:

Բացի այդ, տարածքային ցուցակները ստեղծում են տարբեր կշիռ և ազդեցություն ունեցող մանդատներ, ինչը միշտ չէ, որ նպաստում է պատգամավորների համագործակցությանը և արդյունավետ օրինաստեղծ գործունեությանը:

Հաջորդ էական խնդիրն այն է, որ նախատեսվեցին կոալիցիաների ձևավորման խիստ սահմանափակումներ՝ ըստ էության նվազեցնելով քաղաքական համաձայնության իրական հնարավորությունը: Երրորդ՝ պարզ մեծամասնության և քաղաքական փոքրամասնության համար նախատեսված լրացուցիչ մանդատների շնորհիվ Ընտրական օրենսգրքով փաստացի սահմանվեց ընտրողի կամարտահայտումը վերանայելու հնարավորությունը: Այսպես՝ 2017թ. Հայաստանի Հանրապետական կուսակցությունը ստացավ քվեների 49.15%-ը, որի արդյունքում պետք է ստանար 55 մանդատ: Ազգային փոքրամասնության 3 լրացուցիչ մանդատ ստանալու արդյունքում «Հայաստանի Հանրապետական կուսակցություն» խմբակցությունը ստացավ Ազգային ժողովի մանդատների 54.09%-ը: 2018թ. «Իմ Քայլը» դաշինքը ստացավ քվեների 70.42%-ը, որի արդյունքում պետք է ստանար 84 մանդատ: Ազգային փոքրամասնության 4 լրացուցիչ մանդատ ստանալու արդյունքում «Իմ Քայլը» խմբակցությունը կունենար Ազգային ժողովի մանդատների 83.81%-ը, սակայն քաղաքական փոքրամասնության համար օրենսգրքով երաշխավորված 1/3 տեղն ապահովվեց «Բարգավաճ Հայաստան» խմբակցությանը տրամադրելով 16 լրացուցիչ մանդատ, իսկ «Լուսավոր Հայաստան» խմբակցությանը տրամադրելով 11 լրացուցիչ մանդատ: Երաշխավորված 1/3 մանդատներն, ըստ էության, որևէ ազդեցություն չունեն օրինաստեղծ գործունեության վրա, քանի որ միակ բավարար բարձր կողմ քվեարկություն նախատեսվում է Հանրապետության նախագահի ընտրության ժամանակ: Բոլոր այլ դեպքերում մանդատների 1/3-ը հնարավորություն չի տալիս ազդելու քվեարկության վրա և միաժամանակ արհեստականորեն աղճատում է ընտրողի կամարտահայտումը:

Ընտրողների կողմից ձևավորված Ազգային ժողովում քաղաքական համաձայնության խթանման նպատակով ընտրական օրենսգրքի փոփոխություններն առավել նպաստավոր պայմաններ կարող են նախատեսել կուսակցությունների առաջադրման և մասնակցության համար՝ էականորեն նվազեցնելով ընտրական գրավի չափը և ընտրական շեմը՝ առանձին կուսակցություններով ընտրություններին մասնակցելու դեպքում:

2.9. Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ: Իրավակարգավորման թերություններից անմասն չէ նաև տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները կանոնակարգող բաժինը:

Մեծամասնական ընտրակարգով ընտրվող համայնքի ավագանու ընտրություններ: Ընտրական օրենսգրքի 118-րդ հոդվածի համաձայն՝ համայնքի ղեկավարի ընտրությունը ճանաչվում է չկայացած, եթե, ի թիվս այլ հիմքերի, գրանցված թեկնածուների թիվը պակաս է երկուսից: Այս կարգավորումն ամենևին չի բացառում ընտրությունների անցկացումը մեկ թեկնածուի մասնակցությամբ, օրինակ, այն դեպքում, երբ գրանցված թեկնածուներից որևէ մեկը ինքնաբացարկ է հայտնում գրանցման համար Ընտրական օրենսգրքով նախատեսված ժամկետը լրանալուց հետո: Նման իրավակարգավորումը բերում է նրան, որ փաստացի մեկ թեկնածուի մասնակցությամբ կայանալիք ընտրությունը դեռևս գրանցման փուլում չկասեցնելու նպատակով որոշ անձինք առաջադրվում են որպես թեկնածու՝ ամենևին ընտրությանը մասնակցելու մտադրություն չունենալով, իսկ գրանցման համար օրենսգրքով սահմանված ժամկետը լրանալուց

հետո ինքնաբացարկ են հայտնում: Արդյունքում բոլոր դեպքերում ընտրությունը տեղի է ունենում մեկ թեկնածուի մասնակցությամբ: Այս պատճառով հարկ է խուսափել ընտրական գործընթացը արհեստականորեն ծանրաբեռնելուց:

Ընտրական օրենսգրքի 119-րդ հոդվածի համաձայն՝ համայնքի ավագանու անդամների ընտրությունը համարվում է չկայացած, եթե գրանցումից հետո թեկնածուների թիվը նվազում է Ընտրական օրենսգրքով սահմանված՝ համայնքի ավագանու անդամների թվի կեսից: Նման մոտեցումը ընդունելի չէ, քանի որ համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 13-րդ հոդվածի՝ համայնքի ավագանին կազմավորված է համարվում, եթե ընտրվել է ավագանու անդամների՝ օրենքով սահմանված թվի **առնվազն երկու երրորդը**: Ուստի գրանցված թեկնածուների թիվը չպետք է պակաս լինի համայնքի ավագանու անդամների երկու երրորդից:

Ընտրական օրենսգրքը չի կարգավորում նաև մեծամասնական ընտրակարգով տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների դեպքում ռազմական կամ արտակարգ դրության ավարտից հետո հերթական կամ արտահերթ ընտրությունների նշանակման և անցկացման, թեկնածուների առաջադրման և գրանցման հետ կապված հարցերը:

Համամասնական ընտրակարգով ընտրվող համայնքի ավագանու ընտրություններ: Ընտրական օրենսգրքի 130-րդ հոդվածի համաձայն՝ Երևանի ավագանու ընտրության դեպքում ընտրություններին մասնակցող կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակում ընդգրկվում է առնվազն 25 թեկնածու, իսկ մնացած համայնքների ավագանիների ընտրությունների դեպքում՝ առնվազն 15 թեկնածու: Ինչպես վերևում նշվեց, համայնքի ավագանին կազմավորված է համարվում, եթե ընտրվել է ավագանու անդամների՝ օրենքով սահմանված թվի **առնվազն երկու երրորդը**: Այսինքն՝ օրենքով սահմանվող՝ ընտրական ցուցակում ընդգրկվող թեկնածուների թիվը պետք է հնարավորություն տա ձևավորելու համայնքի ավագանի: Մյուս կողմից, այդ թիվը չպետք է այնքան մեծ լինի, որ ծանրաբեռնի փոքր կուսակցություններին՝ ստիպելով հրաժարվել ընտրություններին մասնակցելուց:

Իր հերթին, Ընտրական օրենսգրքը չի սահմանում համամասնական ընտրակարգով ընտրվող համայնքի ավագանու ընտրությունը չկայացած ճանաչելու հիմքերը: Բաց է մնացել նաև մանդատների բաշխման հարցը ընտրություններին մեկ կամ երկու կուսակցությունների մասնակցության դեպքում:

Ընտրական օրենսգրքում չկարգավորված են մնում նաև համամասնական ընտրակարգով ընտրվող համայնքի ավագանու ընտրությունների դեպքում ռազմական կամ արտակարգ դրության ավարտից հետո հերթական կամ արտահերթ ընտրությունների նշանակման և անցկացման, թեկնածուների առաջադրման և գրանցման հետ կապված հարցերը:

3. Առաջարկվող կարգավորման բնույթը

«Ընտրական օրենսգրք սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ

3.1. Ընտրությունների անցկացումը ռազմական և արտակարգ դրության պայմաններում: Նախագծով առաջարկվում է պահպանել ռազմական և արտակարգ դրության ժամանակ Ազգային ժողովի ընտրություններ անցկացնելու վերաբերյալ գործող արգելքը, իսկ արտակարգ իրավիճակի դեպքում սահմանել ընտրությունների անցկացման հայեցողություն և ըստ անհրաժեշտության

հատուկ պայմաններ, որոնք կիրառելի կլինեն համավարակով պայմանավորված արտակարգ իրավիճակի դեպքում:

Այլ կարգավորում է նախատեսվել տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների դեպքում: Մասնավորապես՝ եթե արտակարգ դրություն է հայտարարվել Հայաստանի հանրապետության ամբողջ տարածքում, ապա տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ չեն անցկացվում: Եթե արտակարգ դրությունը հայտարարվել է միայն Հայաստանի Հանրապետության տարածքի մի մասում, ապա արտակարգ դրություն չհայտարարված տարածքներում չի արգելվում ընտրությունների անցկացումը: Ռազմական դրության դեպքում պահպանվել է տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ անցկացնելու արգելքը:

3.2. Ընտրությունների հրապարակայնություն: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայք: Նախատեսվում է ընտրությունների վերաբերյալ տեղեկատվության հրապարակման, թեկնածուների, կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների, առաջադրման և գրանցման, դիտորդների, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների հավատարմագրման, վստահված անձանց և տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամների առցանց գրանցման համար արդիականացնել Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքը:

Գրանցման և հավատարմագրման օգտահաշիվ: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում գրանցվելուց հետո կուսակցությունները, կազմակերպությունները, զանգվածային լրատվության միջոցները Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից ստանում են օգտահաշիվ, որի միջոցով կարող են մուտքագրել համապատասխանաբար թեկնածուների, վստահված անձանց, դիտորդների, զանգվածային լրատվության միջոցների տվյալները: Դաշինքով հանդես եկող կուսակցություններից յուրաքանչյուրը ստեղծում է առանձին օգտահաշիվ, որից հետո նշում է, թե որ կուսակցությունների հետ է հանդես գալիս դաշինքով: Կատարված նշումը պետք է առցանց եղանակով հաստատվի նույն դաշինքով հանդես եկող մյուս կուսակցությունների կողմից:

Դաշինքով հանդես եկող հասարակական կազմակերպությունները ևս կատարում են նշում այդ մասին, և հնարավորություն ստանում տեղամասային կենտրոնում ներկայացված լինել միաժամանակ 2 դիտորդի միջոցով:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում գրանցվելիս կուսակցությունները, կուսակցությունների դաշինքները, հասարակական կազմակերպությունները, զանգվածային լրատվության միջոցները Կենտրոնական ընտրական հանձնաժողովից ստանում են նշտական օգտահաշիվ, որի միջոցով կարող են կատարել հետագա գրանցումները: Այս օգտահաշիվները օգտագործվում են նաև կուսակցությունների կողմից հայտարարագրեր, հաշվետվություններ հրապարակելու համար: Հասարակական կազմակերպությունները կարող են իրենց օգտահաշվում հրապարակել ընտրությունների վերաբերյալ զեկույցները:

Համացանցային կայքում մուտքագրվող տվյալները ինքնաշխատ կերպով համեմատվում են միմյանց և համացանցային կայքում նախապես ինտեգրված ցուցակների հետ՝ անձին տարբեր անհամատեղելի գործառույթներով գրանցելը/հավատարմագրելը բացառելու համար:

Մեծամասնական ընտրակարգով առաջադրված թեկնածուների օգտահաշիվները գործում են միայն մինչև համապատասխան ընտրությունների պաշտոնական արդյունքների հրապարակումը:

Գրանցումը կատարող անձը պարտադիր իդենտիֆիկացվում է համակարգի կողմից նախքան գրանցման հաստատումը:

Մասնագիտական դասընթացներ: Ազգային ժողովում ներկայացված խմբակցությունները և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովները Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքի միջոցով ներկայացնում են տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամության իրենց թեկնածուներին և մասնագիտական դասընթացների մասնակիցներին: Մասնագիտական դասընթացներին մասնակցելու համար քաղաքացիները կարող են գրանցվել նաև ինքնուրույն:

Նախաքվեարկություն: Ազգային ժողովի և համամասնական ընտրակարգով ընտրվող համայնքների ավագանիների ընտրության դեպքում Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքը հնարավորություն է տալիս օգտագործել նախաքվեարկության գործիքը՝ կուսակցության կամ դաշինքի նախընտրական ցուցակի մասնակցային ձևավորման համար: Գործիքի և նախաքվեարկության արդյունքների կիրառումը կամավոր է և չի փոխարինում Ազգային ժողովի ընտրություններում ընտրական ցուցակի հաստատման վերաբերյալ կարգավորումներին: Նախաքվեարկության գործիքը հնարավորություն կտա կուսակցությանը ներկայացնելու թեկնածուների ցուցակը ըստ կուսակցության նախապատվության և ներգրավելու ընտրողներին այդ նախապատվության վերանայման գործընթացում:

Այս գործիքը կուսակցությանը և կուսակցությունների դաշինքին հնարավորություն է տալիս ոչ միայն գնահատելու հանրային կարծիքը առանձին թեկնածուների վերաբերյալ, այլ նաև ընդհանուր առմամբ գնահատելու կուսակցության/դաշինքի նկատմամբ հետաքրքրության ծավալը:

Կայքի այցելում կարող է մասնակցել տարբեր կուսակցությունների/դաշինքների նախաքվեարկությանը, սակայն յուրաքանչյուրի դեպքում 1 անգամ: Նախաքվեարկության արդյունքները չեն դիտարկվում որպես պաշտոնական քվեարկություն, այլ հանդիսանում են օժանդակող միջոց, որի շնորհիվ որոշակիորեն կմեղմվի բաց ընտրական ցուցակներ չունենալու մտահոգությունը:

Արտաքին օգտագործողին հասանելի տեղեկատվություն

Արտաքին օգտագործողը հնարավորություն ունի տեսնելու՝

- Գրանցված և ընտրությունների մասնակցած/մասնակցող կուսակցություններին, նրանց ծրագրերը, հայտարարագրերը և հաշվետվությունները,
- Գրանցված հասարակական կազմակերպություններին, նրանց դիտորդական առաքելությունների վերաբերյալ զեկույցները,
- Գրանցված զանգվածային լրատվության միջոցներին,
- Մասնագիտական դասընթացի գրանցման հնարավորությունը,
- Ընտրողների ցուցակը, մասնակցությունը,
- Ընտրությունների ժամանակացույցը և քարտեզը:

3.3. Ընտրական ցուցակներ: Նախատեսվում է ընտրական ցուցակներում ընդգրել այն ընտրողներին, ովքեր քվեարկության օրվան նախորդող 6 ամսվա ընթացքում ունեցել են անձը հաստատող վավեր փաստաթուղթ: Սակայն դա վերջիններիս չի գրկում քվեարկելու հնարավորությունից. անձը հաստատող վավեր փաստաթուղթ չունեցող քաղաքացիները կարող են ընդգրկվել ընտրողների լրացուցիչ ցուցակներում և մասնակցել քվեարկությանը:

3.4. Նախընտրական քարոզարշավ և նախընտրական քարոզչություն: Նախագծով առաջարկվում է «նախընտրական քարոզչություն» եզրույթի փոխարեն օգտագործել «նախընտրական քարոզարշավ» հավաքական եզրույթը համապատասխան գործողությունների ոչ սպառիչ ցանկի թվարկմամբ, որն առավել ընդգրկուն կերպով կարտացոլի ընտրապայքարում ներդրվող հնարավոր միջոցներն ու միջոցառումները, ներառյալ՝ ինչպես բուն քարոզչության, այնպես էլ՝ դրա նախապատրաստական գործողությունները: Նախատեսվում է նախընտրական քարոզարշավի մեկնարկը սահմանել ընտրություններին մասնակցող կուսակցությունների ընտրական ցուցակների և թեկնածուների գրանցման համար սահմանված ժամկետի վերջին օրվան հաջորդող 5-րդ օրը:

Նախագծով սահմանվել են «նախընտրական քարոզարշավ» և «նախընտրական քարոզչություն» հասկացությունները, ինչպես նաև նախընտրական քարոզչության իրականացման ձևերը և միջոցները:

Նախընտրական քարոզչությունը զանգվածային լրատվության միջոցներով: Նախատեսվում է վերգետնյա հեռուստաընկերությունների վրա տարածվող կարգավորումները կիրառել նաև կաբելային կապով հեռուստառադիոհեռարձակում իրականացնող հեռուստաընկերությունների և առցանց/համացանցային հեռարձակում իրականացնող կազմակերպությունների նկատմամբ: Զանգվածային լրատվության միջոցներով նախընտրական քարոզչության վերաբերյալ իրավակարգավորումները հիմանականում տարածվել են նաև 70 000-ից ավելի բնակչություն ունեցող համայնքերի ավագանու ընտրություններին մասնակցող կուսակցությունների նկատմամբ: Սահմանվել է Հանրային հեռուստաընկերության կողմից **հեռուստաբանավեճեր** կազմակերպելու պահանջ: Մասնավորապես՝ նախատեսվում է Ազգային ժողովի ընտրությունների դեպքում կազմակերպել առնվազն երկու հեռուստաբանավեճ, որոնցից մեկին պարտադիր պետք է հրավիրվեն կուսակցությունների ընտրական ցուցակների առաջին համարի թեկնածուները: Երևանի ավագանու ընտրությունների դեպքում նախատեսվում է կազմակերպել առնվազն երկու հեռուստաբանավեճ, իսկ 70 000-ից ավելի բնակչություն ունեցող այլ համայնքերի ավագանու ընտրությունների դեպքում՝ առնվազն մեկական հեռուստաբանավեճ:

Նախընտրական քարոզչությունը համացանցում: Կարգավորվել է քարոզչությունը համացանցում գովազդի միջոցով՝ սահմանելով համացանցում, ներառյալ՝ լրատվական կայքերում նախընտրական քարոզչությանը վերաբերող գովազդային նյութերի և տեսանյութերի տեղադրման հնարավորությունը միայն թեկնածուի, կուսակցության կամ նրա ներկայացուցչի հետ կնքված պայմանագրի հիման վրա՝ նախընտրական հիմնադրամի միջոցների հաշվին: Նախատեսվում է նաև նախընտրական քարոզչական նյութերի հրապարակման համար սահմանել «Նախընտրական քարոզարշավ» լուսագիր, ինչպես նաև սահմանվել է պատվիրատուի վերաբերյալ տեղեկություններ ներառելու պահանջ: Համացանցային կայքէջը տնօրինող անձանց

համար սահմանվել է նախընտրական քարոզչության ժամանակահատվածում թեկնածուների, ընտրություններին մասնակցող կուսակցությունների համար ոչ խտրական և ոչ կողմնակալ պայմաններ ապահովելու պարտավորություն:

Նախագծով պահանջներ են սահմանվել ապահովելու ողջամիտ գներ զանգվածային լրատվության միջոցներով իրականացվող գովազդի համար՝ հնարավորություն տալով ռեսուրսներով ոչ հարուստ քաղաքական ուժերին ապահովելու իրենց գովազդը: Մասնավորապես՝ սահմանվել է, որ հանրային ռադիոյի և հանրային հեռուստատեսության վճարովի եթերաժամի մեկ րոպեի գինը չի կարող գերազանցել ընտրությունների նշանակմանը նախորդող վերջին 6 ամսվա համար առևտրային գովազդի միջին գնի 50 տոկոսը: Իր հերթին, մասնավոր հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների կողմից վճարովի եթերաժամի մեկ րոպեի արժեքը չպետք է գերազանցի ընտրությունների նշանակմանը նախորդող վերջին վեց ամսվա համար առևտրային գովազդի միջին արժեքը:

Նախագիծը սահմանում է, որ թեկնածուների, ընտրություններին մասնակցող կուսակցությունների վարկանիշների վերաբերյալ սոցիոլոգիական հարցման արդյունքներ հրապարակելիս հարցումն իրականացնող կազմակերպությունը և տեղեկատվությունը հրապարակող ու վերահրատարակող անձինք, ի լրումն օրենսգրքում սահմանված տվյալների, նշեն իրականացնող կազմակերպության անվանումը, վստահության միջակայքը և ֆինանսավորման աղբյուրը:

Հնարավորինս ընդգրկուն պահանջներ են ամրագրել նաև լրագրողական հարցումների համար:

Ընտրակաշառքի կանխարգելում: Երրորդ անձինք: Նախատեսվում է վերացնել ընտրակաշառքի մասին հայտնելու՝ Քրեական օրենսգրքի խրախուսող նորմով սահմանված եռօրյա ժամկետը՝ չսահմանափակելով պատասխանատվությունից ազատելու հիմքի կիրառումը կոնկրետ ժամկետում դիմելու պայմանով: Արգելվել է ասոցացվող կազմակերպությունների կողմից բարեգործական գործունեության իրականացումն այն համայնքներում, որտեղ անցկացվում են ընտրություններ, որոնց մասնակցում են այդ թեկնածուները, կուսակցությունները կամ նրանց առաջադրած թեկնածուները՝ ընտրությունների օրվա նշանակման պահից մինչև արդյունքների ամփոփումը:

Նախագծով կանոնակարգվել է նաև նախընտրական քարոզչությանը երրորդ անձանց մասնակցությունը: Նախագծով սահմանվել է «Երրորդ անձինք» հասկացությունը, նախընտրական քարոզարշավին վերջիններիս մասնակցության նախապայմանները:

Քարոզչությունը քվեարկության օրը և դրա նախօրեին: Նախագծով, ի թիվս Ընտրական օրենսգրքով սահմանվածի՝ նախատեսվում է քվեարկության և դրան նախորդող օրը արգելել քարոզչության իրականացումը ՀՀ-ում գործունեություն իրականացնող բոլոր զանգվածային լրատվության միջոցների, ինչպես նաև համացանցային գովազդի միջոցով: Արգելվում է նաև քվեարկության օրը տեղամասային կենտրոնին հարող տարածքում մինչև 50 մետր շառավղով անգամ մեկ անձի շարունակական ներկայությունը (եթե գործողությունը շարունակվել է տեղամասային կենտրոնին հարող տարածքը լքելու՝ ոստիկանության ծառայողի բանավոր պահանջը ներկայացնելուց հետո)՝ բացառությամբ քվեարկության օրը քվեարկության սենյակում ներկա գտնվելու իրավունք ունեցող անձանց:

Վարչական ռեսուրսի չարաշահման արգելք: Նախագծով տրվել է «վարչական ռեսուրս» հասկացության սահմանումը, որի հիմքում Վենետիկի հանձնաժողովի կողմից տրված բնորոշումն է: Սահմանվել է վարչական ռեսուրսի օգտագործման արգելք նախընտրական քարոզչության իրականացման նպատակով, այդ թվում՝ նախատեսվել են սահմանափակումներ ընտրություններ նշանակելուց հետո մինչև ընտրությունների արդյունքների ամփոփումն ընկած ժամանակահատվածում պետական կամ համայնքային բյուջեն տնօրինելու առումով՝ արգելելով կոնկրետ ժամանակահատվածում աշխատավարձերի ու կենսաթոշակների բարձրացումը, նպաստների ավելացումը և նախապես չնախատեսված միջոցառումները:

Սահմանվել է պահանջ, որ հանրային ծառայողները նախընտրական քարոզչության մեջ ներգրավվեն բացառապես ոչ աշխատանքային ժամերին և օրերին կամ չվճարվող արձակուրդ վերցնելու պայմաններում: Արգելվել է նաև պաշտոնական գործուղումների համատեղումը նախընտրական քարոզչության հետ:

3.5. Ընտրությունների ֆինանսավորում: Նախագծով ամրագրվել է նախընտրական քարոզարշավ իրականացնելու հետ կապված բոլոր հիմնական ծախսերը, ներառյալ՝ ընտրական շտաբերի վարձակալության հետ կապված ծախսերը նախընտրական հիմնադրամից կատարելու և դրանք պարտադիր հայտարարագրելու պահանջ:

Ֆինանսական թափանցիկություն ապահովելու նպատակով սահմանվել է, որ կուսակցությունների/դաշինքների նախընտրական հիմնադրամում մուծումներ կատարված անձինք պետք է նշեն նաև իրենց անունը, ազգանունը և անձը հաստատող փաստաթղթի համարը:

Սահմանվել է, որ նախընտրական ծախսերը կատարվում են անկանխիկ եղանակով: Նախընտրական հիմնադրամից կանխիկ կատարվող վճարումների ընդհանուր գումարը չի կարող գերազանցել նվազագույն աշխատավարձի 400-ապատիկը:

Ազգային ժողովի և համամասնական ընտրակարգով անցկացվող՝ համայնքերի ավագանիների ընտրություններից հետո կուսակցության (կուսակցությունների դաշինքի) նախընտրական հիմնադրամում մնացած միջոցներն ընտրությունների արդյունքների պաշտոնական հրապարակումից հետո՝ մեկշաբաթյա ժամկետում, փոխանցվում են **կուսակցության հաշվին**, իսկ կուսակցությունների դաշինքի դեպքում հավասարապես բաշխվում են դաշինքը կազմող կուսակցությունների միջև, եթե այլ բան նախատեսված չէ կուսակցությունների դաշինքի որոշմամբ:

Մեծամասնական ընտրակարգով ընտրվող համայնքի ղեկավարի և ավագանու անդամի ընտրություններից հետո թեկնածուի նախընտրական հիմնադրամում մնացած միջոցներն ընտրությունների արդյունքների պաշտոնական հրապարակումից հետո՝ մեկշաբաթյա ժամկետում, փոխանցվում են թեկնածուին առաջադրած կուսակցությանը, իսկ ինքնաառաջադրման դեպքում՝ փոխանցվում են թեկնածուին:

Հայտարարագրման ենթակա չէ կուսակցության օգտին կատարվող կամավոր աշխատանքը, և դրա արժեքը չի հաշվարկվում նախընտրական ծախսերի սահմանաչափում: Սակայն նախատեսվում է, որ կամավոր աշխատանքը ենթակա է հաշվառման, եթե դրա տևողությունը գերազանցում է շաբաթական 20 ժամը:

3. 6. Ղիտորդներ և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներ:

Նախագծով ձևակերպվում է, որ ղիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպություններն ապահովում են ընտրական գործընթացի նկատմամբ հանրային վերահսկողությունը: Վերանայվում են հավատարմագրման ժամկետները (քվեարկության օրվանից 10 օր առաջ) և սահմանվում, որ այդ գործողություններն իրականացվում են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքի միջոցով: Մինչ համացանցային կայքի արդիականացումը Կենտրոնական ընտրական հանձնաժողովը սահմանում է ղիտորդների, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների հավատարմագրման համար անհրաժեշտ փաստաթղթերի էլեկտրոնային ձևերը և համացանցային կայքի միջոցով դրանց ներկայացման կարգը:

Որպես ղիտորդական առաքելություն իրականացնելու պարտադիր պայման է սահմանվել կազմակերպության կառավարման մարմնի ներկայացուցիչների՝ (բացառությամբ ժողովի) ընտրություններին թեկնածուի կարգավիճակով չմասնակցելու հանգամանքը, ինչպես նաև ընտրական գործընթացի նկատմամբ չեզոքությունը:

Նախագծով հանվել է նաև զանգվածային լրատվության միջոցների նկատմամբ անհավասար մոտեցում ամրագրող այն դրույթը, համաձայն որի՝ գործունեության մեկ տարվա սահմանափակումը կիրառելի չէ, եթե լրատվական գործունեություն իրականացնողը լրատվության միջոց է տարածում վերգետնյա եթերային հեռարձակմամբ:

Նախագծով սահմանվել է, որ հանձնաժողովի գործողությունը, որոշումը կամ անգործությունը կարող է բողոքարկել նաև տեղական ղիտորդական առաքելությունը, եթե գտնում է, որ խախտվել են ընտրական իրավունքի՝ Սահմանադրությամբ երաշխավորված սկզբունքները կամ ղիտորդի իրավունքների խախտման պատճառով խախտվել է նաև առաքելության հանրային վերահսկողության իրավունքը: Իսկ տեղամասում քվեարկության արդյունքների վիճարկման իրավունք է վերապահում նաև քվեարկության սենյակում կամ արդյունքների ամփոփման նիստին ներկա գտնված ղիտորդներին:

3. 7. Ընտրական հանձնաժողովներ: Նախագծով սահմանվում է, որ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամն իր պաշտոնավարման ընթացքում չի կարող զբաղեցնելու ղեկավար պաշտոններ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում: Իսկ հրապարակային ելույթներում նրանք պետք է ցուցաբերեն քաղաքական զսպվածություն և չեզոքություն: Անցումային դրույթներով նախատեսվում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում ղեկավար պաշտոններ զբաղեցնող ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամների լիազորությունները դադարում են՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած ժամանակացույցին համապատասխան, բայց ոչ ուշ, քան 2022 թվականի հունվարի 1-ը, եթե ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի համապատասխան անդամը նշված փոփոխություններն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկամսյա ժամկետում, չի հրաժարվում պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում իր զբաղեցրած ղեկավար պաշտոնից:

Ընտրական հանձնաժողովի անդամների պաշտոն զբաղեցնելու պահանջները խստացվել են՝ սահմանելով, որ հանձնաժողովի անդամ չեն կարող լինել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված դիտավորյալ հանցագործության համար, ներառյալ՝

Քրեական օրենսգրքի 149-154.15-րդ հոդվածներով նախատեսված հանցանքների համար դատապարտված անձինք՝ **անկախ դատվածությունը հանված կամ մարված լինելու հանգամանքից:**

Նախագծով «տարածքային ընտրական հանձնաժողով» եզրույթը ամբողջ Ընտրական օրենսգրքում փոխարինվել է «ընտրատարածքային ընտրական հանձնաժողով» եզրույթով, որը հնարավորություն կտա համապատասխան հապավումը տարբերել տեղամասային ընտրական հանձնաժողովի հապավումից (ՏԸՀ):

3.8. Ազգային ժողովի ընտրակարգ: Նախագծով առաջարկվում է սահմանել **պարզ համամասնական ընտրակարգ** նախապես ֆիքսված (փակ) կուսակցական ցուցակների հիման վրա՝ **վերացնելով տարածքային ցուցակները:** Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում ստեղծված հարթակի միջոցով կուսակցություններին հնարավորություն է տրվում իրականացնելու իրենց ընտրական ցուցակի նախաքվեարկություն:

Կուսակցությունների դաշինքի համար սահմանվել է, որ դաշինքի անվանումը ներառում է դաշինքի մաս կազմող բոլոր կուսակցությունների անվանումները կամ դաշինքի անվանման ներքո փակագծերում պետք է նշվեն դաշինքի անդամ բոլոր կուսակցությունների անվանումները:

Նախատեսվում է բարձրացնել կանանց քվոտան ընտրական ցուցակներում: Մասնավորապես՝ սահմանվում է, որ կուսակցության, կուսակցությունների դաշինքի և դաշինքում ընդգրկված կուսակցություններից յուրաքանչյուրի ընտրական ցուցակում առաջին համարից սկսած՝ ցանկացած ամբողջ թվով եռյակներում (1-3, 3-6, 6-9 և այդպես շարունակ՝ մինչև ցուցակի ավարտը) պետք է ընդգրկված լինի պակաս ներկայացված սեռի ներկայացուցիչների առնվազն մեկական ներկայացուցիչ, իսկ ամբողջ ցուցակում՝ յուրաքանչյուր սեռի ներկայացուցիչների թիվը չպետք է գերազանցի 65 տոկոսը:

Խորհրդարանական ընտրությունների համար նախատեսված ընտրական գրավի չափը կուսակցությունների համար նվազեցվել է՝ սահմանելով 7.5 մլն դրամ, իսկ կուսակցությունների դաշինքների համար նախատեսվում է կրկնապատկել ընտրական գրավի չափը՝ սահմանելով 15 մլն դրամ:

Կուսակցությունների համար ընտրական շեմը սահմանվել է 4 տոկոս: Այլ մոտեցում է սահմանվել կուսակցությունների դաշինքների դեպքում: Մասնավորապես՝ երկու կուսակցություններից կազմված կուսակցությունների դաշինքի դեպքում՝ ընտրական շեմը կազմում է 8 տոկոս, երեք կուսակցություններից կազմված դաշինքի դեպքում՝ 9 տոկոս, իսկ 4 և ավելի կուսակցություններից կազմված դաշինքի դեպքում՝ 10 տոկոս:

Վերացվել են փոքրամասնության լրացուցիչ մանդատները, իսկ մեծամասնության լրացուցիչ մանդատների վերաբերյալ կարգավորումը ենթարկվել է փոփոխության այնքանով, որքանով թույլ են տալիս սահմանադրական կարգավորումները: Մասնավորապես՝ նախատեսվում է, որ եթե որևէ կուսակցություն մանդատների բաշխման արդյունքում ստացել է բաշխված մանդատների ընդհանուր թվի **50 տոկոսը**, ապա այդ կուսակցությունն ստանում է այնքան նվազագույն թվով լրացուցիչ մանդատներ, որի արդյունքում այդ կուսակցության մանդատների քանակը տոկոսային արտահայտությամբ լինի ոչ պակաս, քան **52 տոկոս:**

Նախագծով վերացվել է կոալիցիաներ կազմելու կուսակցությունների թվի սահմանափակումը, ինչպես նաև էապես ավելացվել է կոալիցիա կազմելու համար նախատեսված

ժամանակահատվածի տևողությունը: Սա համահունչ է նաև Վենետիկի հանձնաժողովի և ԵԱՀԿ ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի համատեղ կարծիքներում արտահայտված առաջարկություններին: Մասնավորապես՝ նախատեսվում է, որ 14 օրվա ընթացքում, բաշխված մանդատների ընդհանուր թվի **հարաբերական մեծամասնությունն** ստացած կուսակցությունը (կուսակցությունների դաշինքը) կարող է քաղաքական կոալիցիա կազմել մանդատների բաշխմանը մասնակցած մյուս կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) հետ, եթե նրանց օգտին տրված ձայների գումարը բավարար է մանդատների ընդհանուր թվի 52 տոկոսը ստանալու համար, և նրանք եկել են համաձայնության վարչապետի թեկնածուի վերաբերյալ: Եթե 14 օրվա ընթացքում բաշխված մանդատների ընդհանուր թվի հարաբերական մեծամասնությունն ստացած կուսակցությունը (կուսակցությունների դաշինքը) քաղաքական կոալիցիա չի ձևավորում, ապա մանդատների բաշխմանը մասնակցած ցանկացած կուսակցություն (կուսակցությունների դաշինք) 7-օրյա ժամկետում կարող է քաղաքական կոալիցիա կազմել մանդատների բաշխմանը մասնակցած մյուս կուսակցությունների (կուսակցությունների դաշինքի) հետ, եթե նրանց օգտին տրված ձայների գումարը բավարար է բաշխված մանդատների ընդհանուր թվի 52 տոկոսը ստանալու համար, և նրանք եկել են համաձայնության վարչապետի թեկնածուի վերաբերյալ:

Նախագծով բարելավվել են նաև ընտրության երկրորդ փուլին վերաբերող կարգավորումները: Երկրորդ փուլի տևողությունը երկարաձգվել է՝ 28 օրից սահմանելով 42 օր: Մեծամասնության լրացուցիչ մանդատները նախատեսվում է կիրառել կրկին վերևում նշված սկզբունքով: Մասնավորապես՝ ընտրության երկրորդ փուլում հաղթած կուսակցությունը (կուսակցությունների դաշինքը) կամ նոր դաշինքը, որը (որի անդամ կուսակցությունները միասնաբար) առաջին փուլի արդյունքներով ստացել է բաշխված մանդատների ընդհանուր թվի նվազագույնը 50 տոկոսը, ստանում է լրացուցիչ մանդատներ՝ Ընտրական օրենսգրքով սահմանված կարգով:

3.9. Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ: Բարելավվել են նաև տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին վերաբերող կանոնակարգումները: Փոփոխություններ են կատարվել ինչպես համամասնական ընտրակարգով ընտրվող համայնքի ավագանու, այնպես էլ մեծամասնական ընտրակարգով ընտրվող համայնքի ղեկավարի և ավագանու ընտրությունները կարգավորող դրույթներում:

Նախագծով վերացվել է բազմաբնակավայր համայնքներում համամասնական ընտրություններ անցկացնելու մասին պարտադիր նորմը:

Մեծամասնական ընտրակարգով ընտրվող համայնքի ավագանու ընտրություններ: Նախագծով հնարավոր է համարվել համայնքի ղեկավարի ընտրությունը նաև մեկ թեկնածուի մասնակցությամբ: Իսկ համայնքի ավագանու ընտրությունը համարվում է չկայացած, եթե գրանցումից հետո թեկնածուների թիվը նվազում է Ընտրական օրենսգրքով սահմանված՝ համայնքի ավագանու անդամների թվի երկու երրորդից:

Նախագծով կարգավորվել են մեծամասնական ընտրակարգով տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ղեպքում ռազմական կամ արտակարգ դրության ավարտից հետո հերթական կամ արտահերթ ընտրությունների նշանակման և անցկացման, թեկնածուների առաջադրման և գրանցման հետ կապված հարցերը:

Համամասնական ընտրակարգով ընտրվող համայնքի ավագանու ընտրություններ: Նախագծով սահմանվել է, որ ընտրություններին մասնակցող կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուների թիվը չպետք է պակաս լինի համայնքի ավագանու անդամների՝ Ընտրական օրենսգրքով սահմանված մանդատների թվի 1/3-ից: Եթե ընտրություններում առաջադրվել է միայն մեկ կուսակցություն (կուսակցությունների դաշինք), ապա նրան հնարավորություն է տրվում մինչև Ընտրական օրենսգրքով՝ ընտրական ցուցակների գրանցման համար սահմանված ժամկետի ավարտը համալրելու թեկնածուների ցանկը, եթե նրանց թիվը պակաս է տվյալ համայնքի ավագանու անդամների՝ Ընտրական օրենսգրքով սահմանված թվից:

Իսկ եթե ընտրություններում առաջադրված կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) ընտրական ցուցակներում ընդգրկված թեկնածուների **ընդհանուր թիվը պակաս է** Ընտրական օրենսգրքով սահմանված՝ **համայնքի ավագանու անդամների թվից**, ապա նրանց հնարավորություն է տրվում մինչև օրենսգրքով՝ ընտրական ցուցակների գրանցման համար սահմանված ժամկետի ավարտը համալրելու թեկնածուների ցանկը:

Միաժամանակ, բազմաբնակավայր համայնքի բնակիչների՝ հնարավորինս հավասար ներկայացվածությունը համայնքի ավագանու կազմում ապահովելու համար սահմանվել է, որ բազմաբնակավայր համայնքի ընտրություններին մասնակցող կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակում պետք է ընդգրկվեն տվյալ համայնքը կազմող բնակավայրերի **առնվազն 1/2-ը ներկայացնող** (տվյալ բնակավայրում մինչև քվեարկության օրն առնվազն 6 ամսվա հաշվառում ունեցող, իսկ քաղաքացիություն չունեցող թեկնածուների դեպքում՝ առնվազն մեկ տարվա հաշվառում ունեցող) թեկնածուներ:

Նախագծով սահմանվել են համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքի ավագանու ընտրությունը չկայացած ճանաչելու հիմքերը և ընթացակարգը:

Ընտրություններին միայն 2 կուսակցություն (կուսակցությունների դաշինք) մասնակցելու դեպքում մանդատների բաշխմանը համապատասխանաբար մասնակցում են 2 կուսակցությունները (կուսակցությունների դաշինքները): Եթե ընտրությանը մասնակցել է 1 կուսակցություն (կուսակցությունների դաշինք) և ստացել է անհրաժեշտ թվով կողմ քվեարկված քվեաթերթիկներ, ապա բոլոր մանդատները տրվում են տվյալ կուսակցությանը (կուսակցությունների դաշինքին): Իսկ մեկ կուսակցություն (կուսակցությունների դաշինք) քվեարկվելու դեպքում համապատասխան համայնքի ավագանի ընտրվելու մասին որոշում ընդունվում է, եթե կողմ է քվեարկել քվեարկության մասնակիցների կեսից ավելին:

Նախագծով կարգավորվել են նաև համամասնական ընտրակարգով ընտրվող համայնքի ավագանու ընտրությունների դեպքում ռազմական կամ արտակարգ դրության ավարտից հետո հերթական կամ արտահերթ ընտրությունների նշանակման և անցկացման, թեկնածուների առաջադրման և գրանցման հետ կապված հարցերը:

Ավագանու կողմից համայնքի ղեկավարի ընտրությունը: Նախագծով նախատեսվում է ավագանու կողմից համայնքի ղեկավարի գաղտնի քվեարկությամբ ընտրությունը փոխարինել **բաց քվեարկությամբ:**

4. Կից օրենքների նախագծեր: Ընտրական օրենսգրքում փոփոխությունների շրջանակներում փոփոխություններ են կատարվել նաև «Կուսակցությունների մասին» սահմանադրական

օրենքում, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում, Քրեական օրենսգրքում, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում, Աշխատանքային օրենսգրքում և «Հանրային ծառայության մասին» օրենքում:

5. Նախագծերի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք

Յոթերորդ գումարման Ազգային ժողովի գործունեության մեկնարկից հետո Ազգային ժողովի նախագահ Արարատ Միրզոյանի նախաձեռնությամբ ստեղծվեց ընտրական բարեփոխումների աշխատանքային խումբ, որի կազմում են բոլոր երեք խմբակցությունների ներկայացուցիչները և համակարգվում է Համազասպ Դանիելյանի կողմից: Աշխատանքային խմբի անդամների հետ միասին ընտրական օրենսգրքի այս նախագծի փոփոխությունների քննարկմանը և մշակմանը ներգրավված են եղել նաև Ազգային ժողովի պատգամավորներ, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ, արտախորհրդարանական կուսակցությունների ներկայացուցիչներ, միջազգային և տեղական փորձագետներ, պետական կառույցների ներկայացուցիչներ:

Նախագիծը մշակվել է Ընտրական համակարգերի միջազգային կազմակերպության հայաստանյան գրասենյակի տեխնիկական աջակցությամբ (IFES Armenia):

6. Ակնկալվող արդյունքը

Սույն օրենքների նախագծերի փաթեթի ընդունմամբ ակնկալվում է հետևյալ խնդիրների լուծումը՝

1. ընտրական գործընթացների պատշաճ կազմակերպման հնարավորություն,
2. քաղաքացիների ազատ կամարտահայտման նկատմամբ ցանկացած ապօրինի ազդեցության գործադրման բացառում,
3. նախընտրական քարոզարշավի ընթացքում հավասար հնարավորությունների ապահովում բոլոր կուսակցությունների համար,
4. նախընտրական քարոզարշավի ֆինանսական թափանցիկության ապահովում,
5. պարզ համամասնական ընտրակարգի ներդրման միջոցով անհատների դերի հնարավորինս նվազեցում՝ բարձրացնելով կուսակցությունների և ծրագրերի մրցակցության աստիճանը և նպաստելով պաշտամենտարիզմի զարգացմանը, ինչպես նաև ընտրական գործառնթացի մասնակիցների և ընտրողների համար ընտրական համակարգի պարզության և մատչելիության ապահովում,
6. պակաս ներկայացված սեռի՝ առավել բարձր ներկայացվածության երաշխիքներ խորհրդարանում և ավագանու կազմում,
7. հաշմանդամություն ունեցող անձանց համար ընտրական գործընթացի մատչելիության ապահովում,
8. ընտրությունների արդյունքների վրա՝ ֆինանսական միջոցների ազդեցության նվազման, կուսակցությունների և պետության նույնացման բացառման, քարոզարշավի ծախսերի թափանցիկության և վերահսկելիության միջոցով քաղաքացիների տեղեկացված և ազատ կամարտահայտման հնարավորության ապահովում,
9. ազատ և արդար ընտրությունների ապահովում:

